



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«12» Տեպրեբ 2021թ.

N 37-Ղ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ
ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ
ԵՎ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 7-րդ մասով, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ և 34-րդ հոդվածի 3-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 5-ի N 9 որոշումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 14 իրավաբանական անձանց շինարարության իրականացման լիցենզիա և թվով 16 ներդիր, 3 իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիա և թվով 4 ներդիր (համաձայն հավելված 1-ի):

2. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 3 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 3 ներդիր, 1 իրավաբանական անձի շինարարության որակի տեխնիկական հսկողության թվով 1 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման թվով 1 ներդիր (համաձայն հավելված 2-ի):

3. Փոփոխել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման թվով 1 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության թվով 1 ներդիր (համաձայն հավելված 3-ի):

4. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված 3 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 3 լիցենզիայի և 5 ներդիրի, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիայի և 1 ներդիրի գործողությունը (համաձայն հավելված 4-ի):

5. Մերժել 13 իրավաբանական անձանց շինարարության իրականացման, 1 իրավաբանական անձի շինարարության որակի տեխնիկական հսկողության, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության համար ներկայացված լիցենզիայի և ներդիրի տրամադրման հայտերը (համաձայն հավելված 5-ի):

6. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

- «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն լիցենզիան հանձնել լիցենզավորված անձանց՝ համապատասխան տարեկան պետական տուրքի վճարման դեպքում:

- Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

5/12/2021

X 

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2021թ. « Մայիսի » « 12 »
 N 34-Ղ հրամանի

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի 14 իրավաբանական անձանց շինարարության իրականացման լիցենզիայի և թվով 16 ներդիրի, 3 իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիայի և թվով 4 ներդիրի տրամադրման.

h/h	Լիցենզավորվող անձի անվանումը, գտնվելու վայրը, պատասխանատու անձի անունը, ազգանուն, հայրանունը, անձնագիր, գրանցման համարը, ՀՎՀՀ	Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակը
1.	«ԿԱՀՈՒՅՔԱԳՈՐԾ» Ա/Կ ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ Փ., 68, 27 00001003 Դ-743-2021 ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՀԱԿԻ ՄԱՏԻՆՅԱՆ AP0653043	Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական
2.	«ՀԱԿՈՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱԲՇՆ» ՍՊԸ Երևան, Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբանցք, 8, 118 01259436 Դ-754-2021 ՍԵՐՉԵՅ ԱՐՏԵՄԻ ՀԱԿՈՐՅԱՆ 000596213	Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական
3.	«ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊԸ ԱՐՄԱՎԻՐ, ՎԱԴԱՐՇԱՊԱՏ, ՄԱՆՈՒԿՅԱՆ ԹՂՄ., 194 04435513 Դ-757-2021 ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ AT0434040	Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական
4.	«ԼԵՈՇԻՆ» ՍՊԸ ՎԱՅՈՑ ՁՈՐ, ՈՒՆՆԴ, 9, 15 08913141 Դ-750-2021 ԷԴՎԱՐԴ ԳՐԻՇԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆ AM0438548	Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման՝ 2)բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր.